



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 21

ՀԱՐԱՐ

19 ՅՈՒՆԿԱՐ 1908

ԱՊՐԵՍՏՈՂՈՐ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՐԵՍՏՈՂՈՐ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշտ-Գարու, Օռոգախ-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փաքա

(T. Asadourian) شرکت مطبوعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ալի հաստատութիւն 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամալն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւկի տղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտորի լողործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախին մի միայն Սինկեր Հնկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՍՈՍՆԱՎԱՅՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊԱԼԱՏ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | Չարշը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեալ երաւեսաւորութիւն

Մասնանիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Հնկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւրքոյլսի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 ղրշ. վեցամսեայ 45 ղրշ. գա-
ւառներու համար տարեկան 108 ղրշ. վեց-
ամսեայ 60 ղրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւք փարս: ԱՐԵԻԵԼՔ
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խըմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-
լաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բայց ի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագիրն ալ կ'ըլլէ ուղղել. Տէր և
Տնօրէն Գարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խըմ-
բագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽԲՐԱԳԻՐ — ՎԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 21

ՇԱՐԱԹ

19 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԹՂԹԱՏԵՑԷՔ ՆԱՅԻՆՔ ԻՆՉԵՐ ԳՐՈՒԱԾ ԿԱՆ...

Մանկիկներուն պէս, որոնք Պօնապոլէն ներս մտնելուն իրենց վառվառն աչքերը չորսդին, ու կաթնաթուր թաթիկնին հոս հոն կը պտըտցնեն՝ այլազան առարկաներէն չլացած, և որոնք ընտրութեան մէջ կը չուարին, այնքան փայլուն, այնքան իրենց ճաշակին յարմար կը գտնեն այդ ահագին ամբողջութիւնը. ճիշդ անոնց պէս եղայ ես ալ, երբ առաջին անգամ սկսայ թղթատել Ամենուն Տարեցոյցը: Ամբողջութիւնը ճաշակաւոր, ամէն էջ նոր, ամէն նիւթ խնամօտ և ամէն պատկեր տեղին գրուած դտայ անոր մէջ:

Թէոդիկ՝ իր վերջին տասը տարիներուն մէջ գրագէտի անուն մը չինեց իր արձակ գրուածքներովը, ֆանթեզիներովը և ձանչուր դիմեհու շարքովը, և յաջորդաբար հրատարակած տարեցոյցներով, իր գրչի մարդու համբաւին բերաւ կցել անխոնջ աշխատանքի տիպոյսը:

Յօդուած մը կամ յօդուածներ գրելը, վարժութիւն ունեցողին համար այնքան դժուար չէ, նամանաւանդ երբ ընդլայնելիք նիւթ մ'ալ պատրաստ ըլլայ օրը օրին, բայց տարեցոյց մը կազմակերպելը՝ կարողութեան հետ համբերութիւն ալ կը պահանջէ, և ասոր համար է որ չատեր չեն յաջողիր, օրինակ Հիւանդանոցին օրացոյցը, որ հակառակ այնքան խնամքին և հոգածութեան, զոր կը վայելէ, չէ կրցած մինչ ցայսօր ներկայանալի գործ մը դառնալ յաշս ժողովրդեան ինքեիքեհ գասին, և որուն համար ամէն տարի փորձեր կըլլան ասոր անոր ձեռքին տակ նըպատակին հասնելու անել ճիգերով:

Ամենուն Տարեցոյցը encyclopedie մըն է, անթերի աշխատութիւն մը, որուն առաջին տարին՝ 1907ինը այնքան գնահատուելէ վերջ, 908ինը ալ աւելի կատարելագործուած, եկաւ հաստատել սա ճշմարտութիւնը թէ

Թէոդիկ՝ գրագէտի կարողութեան հետ տա-
րեցոյցի հեղինակի իրաւունքն ալ իւրացու-
ցած է: Եւ կարծեմ թէ պղտիկ գործի մը
թեթեւ գնահատումը չէ այս ճշմարտութիւնը
զոր պարծանօք կը խոստովանինք:

Մեր մէջ կը գտնուին կիներ, որոնք իս-
կապէս գեղեցիկ և բնականէն ատով օժտուած
ըլլալուն համար դուրսէն զարդարանքի,
պնանքի և թուալէթի պէտքը, հարկը չեն
զգար, ու միշտ իրենց բնականին մէջ կերե-
ւան մեղի, անշուշտ գիտակցութեամբ իրենց
ֆիզիքական արժանիքին: Նոյնը կրնանք ը-
սել Թէոդիկի համար, զարմանալի է իր ան-
տարբերութիւնը անդացող գովեստներուն
հանդէպ, չի չլանար, չի չփանար, և իր հաս-
ցէին եղած բոլոր գովաբանական շնորհաւո-
րութիւններուն պարզ քմծիծաղով մը պա-
տասխանելէ զատ, հեզնականի տանելու չափ
պարզմտութիւն ցոյց կուտայ:

Գրական հաւաքոյթի մը մէջ երբ ներկայ-
ները միաբերան գովեստը կը կարգային իր
երկասիրութեան, համեստութիւնը ունեցաւ
պատասխանելու թէ՛ ինքը աւելի գոհ պիտի
ըլլար երբ լրջօրէն քննադատէին իր երկը,
քան թէ գովաբանէին, բան մը որով՝ մա-
սամբ սրբագրուած պիտի ըլլար իր յաջորդ-
տարուան ալ . . .:

Իմ մասիս, սրտի մեծութիւն մը և հո-
գիի վեհութիւն մը տեսայ իր համեստ այս
պատասխանին մէջ, որով փոխանակ Ռatté
ըլլալու, կը փափաքէր որպէս զի սխալներ
— եթէ կային անոր մէջ — խնդրոյ առար-
կայ և խօսակցութեան նիւթ ըլլաին:

Միտքս ընդարձակ գրախօսական մը կամ
քննադատական մը գրել չէ իր այնքան սիր-
ուած և յարգուած Տարեցոյցին շուրջ, բայց
կը ներէ անշուշտ յարգելի հեղինակը երբ դի-
տել տամ իրեն թէ՛ այս տարուանին մէջ իբր
նորութիւն աւելցուած յուշատետրին էջերը
քիչ մը անյարմար զետեղուած էին գրքին
մէջ, այսինքն յօդուածները ընդհատուած
էին, ատոնցմով, և թէ կարծեմ աւելի պատ-
շտ և օրինաւոր պիտի ըլլար ամէնուն մէկ
տեղ մը յատկացուէր, Տարեցոյցին յուս-
տեմք անուամբ: Ուրիշ:

Կարծեմ ամէնուն հաճելի և ամէնէն
փնտռուած բանը պիտի ըլլար երբ հեղինակը

աւելի լայն տեղ տար զուարթ գրութիւննե-
րու, փոքրիկ mots de la fin-երու, cause-
ries-երու և երգիծական շիք ոտանաւորնե-
րու, որոնք այնքան կը փնտռուին այսօր նոյն
իսկ գրական շրջանակներու մէջ, մտածելով
թէ՛ Ալէլուեա՛յներու և պատուելիներու կեն-
սագրականներու դարը շատոնց տէ՛մօտէ ե-
ղած է: Ուրիշ:

Յարմար չէ՞ր ըլլար արդեօք գեղարուես-
տական լայն բաժին մը յատկացնել Ամենուն
Տարեցոյցին մէջ, և այդ էջերով ծանօթաց-
նել աշխարհի մեծամեծ միլիարտիներու,
ֆոլքօքիքոններու, դաշնակահարներու, վիո-
լոնիստներու և դեռ կարգ մը արուեստա-
գէտներու պատկերները, ըլլան Եւրոպացի
կամ տեղացի, որոնք քիչ մը քիչ հետաքրք-
րութիւն չէր որ պիտի առթէին և խօսակցու-
թեան ճոխ նիւթ մը սալօններու մէջ:

Անշուշտ պիտի ներուի իմ այս համեստ
դիտողութիւններս, որոնք քննադատական
կճուկներէն բոլորովին հեռու՝ իբրեւ գործին
կատարելութեան տեսլացող մը մէջ կը բե-
րեմ հոս:

Հարկ է ըսել թէ տպագրութեան մաք-
րութիւնը և կոկիկ կազմն ալ մեծ դեր խա-
ղացան են գործին փայլուն յաջողութեան
մէջ: Ամէն անգամ որ պոօօիւն մը կամ
ո՛ր եւ է տպագրութիւն մը ձեռք կառնեմ ու
կսքանչանամ, անպատճառ Տէ՛ր-ՆԵՐՍԷՍԵԱՆ
ստորագրութիւնը կը գտնեմ ատոնց տակ:
Ճաշակ, մաքրութիւն և նորութիւն, ահա
տպագրութեան մը համար բնորոշած առա-
ւելութիւնները, զոր կը տեսնուին այդ տպա-
րանէն լոյս տեսած գործերուն մէջ, և Ամենուն
Տարեցոյցը իբր նմոյշ կրնայ ծառայել տպագ-
րական commandes-եր ընել ուղղոյն:

Չեմ գիտեր, բայց ես լաւագոյն գործը
գտայ Ամենուն Տարեցոյցը, մինչեւ հիմա հը-
րատարակուածներէն և հրատարակելիներէն
ալ՝ անշուշտ 1909ը:

ԶԱԶԱ

ՅԱԶՈՐԻ ԹԻԻՈՎ

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ
ՏՊԱԽՈՐՈՒԹԻԻՆՆԵՐ ԻՐ ՆՊԱՍՏԵՆ

ՁՈԳ ՄՈԳ

A l' Alpiar !!!

Ամուսնութիւնը ծանր չղթայ մըն է զոր կրելու համար ասկէ առաջ երկու հոգի բաւական էր:

Այս օրուան օրս՝ երեք հոգի պէտք է, երբեմն ալ չորս:

×

Քիչ մը միս՝ մարմնոյն ամէն կողմը, բաւական խելք գեղեցիկ գլխի մը մէջ և շատ սիրտ աղւոր կուրծքի մը տակ:

Ահա՛ ինչ պիտի ուղէի որ ունենար այն էակը որ ձեռքը ձեռքիս մէջ մոռնալով պիտի փափաքէր գիտնալ թէ երկու հոգի ինչպէս կը ծերանան ... մէկ բարձի վրայ:

×

Ամէն բան կը սիրուի աշխարհիս վրայ, բայց փառանձեմ մը սիրելու համար մարդս սա՛հափ ստամոքս մը ունենալու է:

×

Աղջիկ մը գեղեցիկ կոչուելու համար երեք բան կարճ ունենալու է՝ աղաները, աղանջները և ... լեզուն: Երեք բան պզտիկ՝ քիթը, գլուխը և ... յաւակնոտութիւնը: Երեք բան երկայն՝ մազերը, մատուցները և ... համբերութիւնը: Երեք բան ճերմակ՝ մորթը, ձեռքերը և ... հագած շապիկը: Երեք բան կլոր՝ թեւերը, բումբերը և ... կուրծքերը. բայց այս վերջին երեք բաները կրնան կլոր չըլլալ, երբ կլորիկ է ... դրամօթիտը:

×

Ինչ է սէրը:

Կարգուած զոյգերուն համար corvée մը, այլամերձ կիներու համար՝ սիրտմաշուք մը, ինքնամատոյց կիներու համար՝ հասոյթի աղբիւր մը, վիպագիրներու համար՝ յաւիտենական և անսպառ նիւթ մը, այրի կիներուն համար՝ միթիթարութիւն մը, տունը մնացած աղջիկներուն համար՝ արգիլեալ պտուղ մը, ստնտու կիներու համար՝ կաթի աղբիւր մը, կաթերուն համար rente viagère մը և եօթանասուն տարեկան ծերերուն համար՝ անցեալէն ... յիշատակ մը:

×

Այն օրը ուր մեր եկեղեցականները կինե-րէ պիտի բաղկանան — կին փաստաբան ըլլալէն ետքը ինչո՞ւ կին քահանայ ալ չըլլայ — օ՛հ, այն ատեն մէկ դործ մը պիտի ունենանք մենք էրիկ մարդիկս: Մեղանչել առտուընէ մինչեւ իրիկուն, շարունակ մեղանչել, ձեռքերնուս եկածին չափ մեղանչել: Եւ ասիկայ, միայն անոնց փեշերուն տակ կարելի եղածին չափ ստէպ խոստովանանքի երթալու համար ...:

×

Թէեւ Աւետարանը մեղք կը համարի գողութիւնը, ստախօսութիւնը, զրպարտութիւնը, հարիւրին քառասունը հինգ տոկոսը, վայրահաչութիւնը, մարդասպանութիւնը, թէեւ — մի՛ շնար — կը պատուիրէ մեղի, բայց երբէք աչքիս չէ զարկած տեղ մը ուր ըսած ըլլայ — վրան բաց մի՛ գրեր:

×

Աղջիկ մը տաանըվեց տարեկան եղած ատենը կը փափաքի իբրեւ ամուսին ունենալ մեծահարուստ կալուածատէր մը, տաանըութիւն՝ հառառու մը, քսանը հինգին՝ դրամատան պաշտօնեայ մը, քսանը ութին՝ պարզ գրագիր մը, երեսունին՝ արհեստաւոր մը, երեսուն երկուքին՝ ... ով որ ըլլայ, իսկ երեսունըհինգին ... ինչ որ ըլլայ:

×

Մարդուս կեանքը երեք գլխաւոր փուլերէ կը կազմուի: Նախ կը ծնինք, յետոյ կամուսնանանք և ապա կը մեռնինք:

Ընդհանրապէս այս է ճակատագիրը մեղի պէս սովորական մահկանացուներուն: Պզտիկ բացառութիւն մը կը կազմեն միայն այն առանձնաշնորհեալ, խելացի և երջանիկ մարդերը որ կը մեռնին ... կարգուելէ առաջ:

×

Պիտի գայ օր մը — թերեւս շատ հեռու չէ — որ եթէ կնոջական արդուզարդերուն ծախքերը շարունակեն այսքան բարձր մնալ, պիտի գտնուին խոհեմ և չըջահայեաց փեսաներ որ հիանալի կանխամտածումով մը պիտի փնտռեն մահճակալ մը որ առնուաղն ... երեք հոգինոց ըլլայ:

×

Ամուսնացած մարդիկ անպատճառ անկողին մը կուենան իրենց տան մէջ, իսկ ամուրիները — ի՞նչ հակասութիւն — մէկէ աւելի անկողիններ կուենան ընդհանրապէս կարգուած մարդերու տանը մէջ:

X

Պոլսոյ մէջ անգամ մը, — շաբաթ իրիկուն մըն էր, չեմ մոռնար — ջոջ վաճառական մը երկու ժամ տեւող խրատականով մը կը յորդորէր ինծի որ վրան բաց գրականութիւն չընեմ և կիրակի օրը ... քնին կը շփոթէր ... կնոջը հետ:

X

Քանի մը մանիֆաթուրաճիներ ունինք, որոնք շաբաթական երեք մէծիտի փոխարէն, կը պահանջեն որ քովերնին առնելիք պաշտօնեանին ամէն անտոգիւտ առաքինութիւնները ունենայ, այսինքն աշխատասէր ըլլայ միջինի մը չափ և համբերող ըլլայ ... տալիք աւանակի հաւասար:

Յ. ԱԼՓԻԱՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿԻՆ

ԲԱՅ ՊԱՏԱՍԻԱՆ

«Փունջ» անուն պարբերականին նախորդ թիւին մէջ կարգ մը դիտողութիւններ ըրած էր ոմն ոք ծածկանուն, և խնդրած էր մենէ բացատրութիւն տալ կարգ մը դիտողութիւններուն համար, զորս քաղած էր մեր բացառիկ Աւագմէն:

Բացառիկ մեր այս տարուան թիւը կըրնանք նմանցնել հարսի մը որ, հրապարակին վրայ կեցած կը հարցնէ ամէնուն, ո՞ւր տեղս աղուոր է, և ո՞ւր տեղս տգեղ...:

Սիրելիս, այս տեսակ ձեռնարկներու մէջ ապրիւն թերութիւններն կը նմանին Գոլոմպոսի հաւկիթին, գետինը զարնելով կեցնելէն վերջը մտածողներ կրնան գտնուիլ թէ... այդ կրնար ըլլար, բայց առաջ խելքերնիդ ո՞ւր էր...:

Մենք կատարեալ դործ մը մէջտեղ հանածի յոխորտանքը չունինք, պատկերները դիրք անոնց՝ որոնք իրենց լուսանկարը մեզ յանձնեցին, և կամ գտանք, իսկ անոնք որոնց պատկերը առիթ չունեցանք հրատարակելու, պէտք է ըսեմ անգամ մ'ընդ միշտ թէ՛ ՄԵՆՔ ԱՆԱՆԿ ՈՒՋԵՑԻՆՔ:

ԳՈՐԾԻՆ ՏԵՐԸ

ՅՈՐԴՈՐԱԿ

[ՖԱՆԹԶԻ]

— Մուկի մը բոյնը՝ կասուի մը ականջին մէջ չըլլար:

— Մեղուն խայթոցովն՝ եզ քեւ չըլլար:

— Ջորին՝ ծոցուր տեսել չըլլար:

— Կարիբին մկրատվը՝ կերպաս կտել չըլլար:

— Լուին՝ մագուրֆա սորվեցունել չըլլար:

— Թուլբերան մը կղպելու համար՝ բալիւն չըլլար:

— Կրիայի տեսին մէջ՝ լուսցի բնել չըլլար:

— Ագուաին միսովը՝ կերակուր եփել չըլլար:

— Կեռասնեին վրայ՝ սեպդինի պատաս չըլլար:

— Սարդի ոսայցեն՝ բենեզ չըլլար:

— Վարունգով՝ հոգու մասաղ չըլլար:

— Օձի հաւկիթով՝ ձուագեղ չըլլար:

— Պիծակին փերակը՝ ուտելիք մեղր չըլլար:

— Ճաննին ծիրսովը բուսահողի պարտաւ չըլլար:

— Փօռաւ բերնով՝ պերճաճայն առողանութիւն չըլլար:

— Ակնոցն աչագուրկին օգտակար չըլլար:

— Գեղեցիկ փարոզի ունեցող ժամուն վերնասունը քափուր չըլլար:

— Հոգեառ հրեցակին լօյ չըլլար:

— Հարբուխէն ունեցեր սրինգ ածող անձի մը՝ բոյր հաւնեցունել չըլլար:

— Գոմէին կաշիէն՝ ձեռնոց չըլլար:

— Ագուաի փետուրներով՝ կանացի հովահար չըլլար:

— Մագին՝ անսուղ գային կաղաղը խաղաղ մակաղի չըլլար:

— Օձի մը պէս մարդ կ'ըլլայ, բայց մարդու պէս օձ չըլլար:

— Ծախսը ծանր, ցոյցը՝ մեծ, ծառան՝ առաւ անձանց ծոցը լեցուն չըլլար:

— Գործը գիտող, քանքարի տէր ու քիչով գոն փաղբիցիին գրպանը ծակ չըլլար:

— Չարֆաւ եւ աշալուրջ ըլլալ չի՛ բաւեր, չաջողածը ջոջ չըլլար:

— Եւ վերջապէս ... — Թեոդիկի Տարեցոյցին չի հաւնող կ'ըլլա՞յ մի ... չըլլա՞ր:

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱԳՍԵԱՆ

Կաղանդի մեր բացառիկ քիւին համար յասուկ գրուած, բայց նոյն քիւին մէջ ո՛ր եւ է յօդուած չի գտնուելո՞ւն՝ այս անգամ կը հրատարակենք հետեւեալ տրամիս գրութիւնը :

ՆՈՐ ՏԱՐԻ

Ա. — Ողջո՛յն քեզ, Նոր Տարի, ո՛վ դու Մանկութեան ամենէն սիրական ու պաշտելի բարեկամը: Ողջո՛յն քեզ, ո՛վ պարգեւաբեր գեղեցիկ օր :

Բ. — Անուշիկ ձայներնիդ սիրեմ, ո՛վ գուշար գումուշար, բարի՛, հազա՛ր բարի, ո՛վ ամբան ու ձմեռն բարձ ու խրոճած հազար ու մէկ պտուղներ, ո՛վ իմ սիրական պին պիր չեփս անուշեղեններս :

Գ. — Հոգիդ սիրեմ Զեքե Փէլթե, ո՛վ խաբունիկ Անուշապուր, ո՛վ ցանցիկին նօհոս բօփի, իմ ծեր մամուս ըռավանին, Տիւրքիներուն պըռծօլան :

Դ. — Պայղըն տեւիդ մեռնիմ, ո՛վ քահինի փոսա սօլմաի, ո՛վ սխոր քաշախով փաշայացեալ իմ ազնուական լուքիաս. ո՛վ բարեպաշտներուն եւ ամբարիւշներուն անմահական համադամը, հնդկահաւը աղբափն, հարուստին սալաքան եւ մաւախառին քենամին :

Ե. — Հապա քեզ, ի՛նչ սրագին եւ ոսկեհուն ներբողներ հիւսեմ, ո՛վ համեղանաշակ եւ մըռմըռիկ իմ լահանա բուռնուսիս, ո՛վ դու մահմուդներուն աստուածային օշաւալը, դու բարեկամն ու քենամին բոլոր մառազլըներուն: Սիրե՛մ համըդ, հոսիս մեռնիմ, իսկ պիպեռի ջուրերուդ մէջ պանեօ ընեմ ց'յեփն շունջ իմ կենաց :

Զ. — Սեղանի զաւրդ, աղնապարա՛ր ո՛վ զովարար ու գեղադէմ նարինջ-խնձոր, նուսերկելիլ եւ մանսարին, ըլլայ Յաֆա, կամ Թռիփօյի, խապա Ֆեթիֆ կամ Ամասիա, պատույն տեղը կուտամ ձեզի՝ Կաղանդի փառաւոր սեղանին վրայ՝ էնկիւրցի ձեր խնամի ջրոս ցանձին փոլ :

Է. — Իսկ դուք, ո՛վ զրահապառ նեղի խաբուն, պինդ գլուխ ընկոյզ, քեռաքուռու կուռն ու կլոր դու կաղին, դուք Ասունձոյ բարեւն անգամ մի՛ տա՛ աւերակ բերան-

ներու: Դուք միտէ տէրէն մականուանեալ Քէչի պույնուզի, ձեր պարտիզպանին հետ՝ սպասեցե՛ք որ երկարէ ունելին զայ ձեր հախեն :

Ը. — Իսկ քեզ, ո՛վ պտուղներու Ազնուափայլ բազուկին, ո՛վ նազելաւուք իմ խաղող, ո՛վ երանելի Նոյ Նահապետին սփոփանք, դուն՝ մայր գինույ, աղբիւր զուարթութեան, խրան պերճախօսութեան, խորան Բազուի եւ նեկսար աստուածութեան: Դու բարձաքեանդ հոգիս մասաղ, իսկ սեւ ու կարմիր հասիկներուդ՝ ստամոսս քեզ ծառայ :

Թ. — Թօփիկ բօփիկ իմ բուլիկ, Նազելիի դու պարծանք, դու խաղողին կենամայր եւ նշանաւոր արմաւին: Մէջդ դուրաղ ծածկուած՝ նուրբ շաքարի մարգարտով, պառաւներուն ծամոցը, ծոյլ աղիներու դու խրան :

Ժ. — Եւ դու, ո՛վ արմաւ պատուական, Արաբական դու պարգեւ, մեղրածորան փոստիդ՝ ծերն ու տղան կը խայտան :

Քու խորհրդաւոր ոտերդ, իբրեւ նշանակ խաղաղութեան, որոնցմով Աստուածորդւոյն գալուստը ողջունեց Երուսաղէմ, մենք ալ Ովսանմաներով կ'ողջունենք քու բարի գալուստդ ո՛վ 1908 Տարի :

Տ Ի Շ Լ Է Կ

1 9 0 8

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

3. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՍ ԴՐՔԻՆ ՀԱՄԱՐ ՅԱՏԿԱՊԵՍ ՓՈՐԱԳՐՈՒԱՆ
300 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Անմրցելիօրէն ընտելագոյն Դասագիրք՝ Տարր. Դասընթացի երկսեռ աշակերտաց համար: Գին 5 դրուք :

Կեդրոնատեղին է հեղինակին սեպհական ԳԱՐՈՒՆ Դրասունք, Կ. Պոլիս, Մեծ Նոր խան, վերի յարկ, քիւ 55 :

ՃԱՖՃԱՖԻ ՍՈՒԱՌԷ

Եթէ Երուսաղէմ երթալը կրօնական, աչ ըսալը ֆիզիքական պարտականութիւններ են ... Երեկոյթ սարքելն ալ բարոյական պարտականութեան կարգ անցած է հիմա :

Երեկոյթները մեր օրերուն այնքան սովորական դարձած են հիմա որ, մարդ թերեւս վարանի այս ցուրտ օդերուն ճերմակեղեն փոխելու, սակայն երեկոյթ մը կազմակերպել ... չըբըն իշի :

Դիտեցէք, բոլոր երեկոյթները որոնք անուան տօնախմբութեան հետեւանքներ են, ընդհանրապէս ձմրան ներկայ եղանակին վերապահուած են գոգցես, չեմ գիտեր թէ օրացոյց չինողներն ալ հին ատեն վախճն, Բա սր բաքիցեօնէն և վաթիցկըն բօսքէն համ կառնէին արդեօք, քանի որ նոյն տօնախմբութիւնները ձմրան այս երկայն գիշերներուն բերած յարմարցուցած են որպէս զի ... տաքօրէն վայելեն ու վաղեցունեն երեկոյթները :

Երեկոյթը՝ soiree, որ Եւրոպական բարքերէն եկած արմատացած է մեր մէջ, իր խաղական ձևէն և պերճանքէն շատ ու շատ տուժած, թոթափած, փետտուած հաւու պէս բան մը եղած է : Անունը նոյնն է, պարբեր, միւլիք, վերջապէս ամէն բան քիչ շատ կը յարմարին նպատակին, սակայն իրականութեան մէջ պէտք է ըսել թէ՝ գինին քացախի փոխած ենք մինք : Քիչ մը ծաղրելի խօստովանութիւն՝ սակայն իրականութիւնն իսկ է :

Մեր մէջ երեկոյթները երկու նպատակաւ տեղի կունենան, մէյ մը անունի տօնախմբութեան առթիւ, երկրորդ աղջիկ քշելու պատրուակաւ, և պէտք է խոստովանիլ թէ այս երկրորդը առաջինէն աւելի նպատակաշարմար նկատուած է և արդիւնքն ալ չահաւոր :

Գաղափար մը տալու համար նկարագրենք միջակորեար դասին մէկ երեկոյթը, որ պիտի կրնայ հաստատել մեր ըսածը :

Կարապետիկ աղա, ընտանիքի հայր, համեստ ու գործուհեայ, չեմ գիտեր ի՞նչ մեղք գործած էր Աստուծոյ դէմ որ, Նախախնա-

մութիւնը իրեն, գործ չգիտցող կին մը և զոյգ մը վոթկած աղջիկներ պարգևած ըլլալով, հակառակ եկեղեցւոյ պատերը համբուրելու չափ հաւատով ըլլալուն՝ ինքզինքը պատժուած կզգար :

Շաբաթ մը առաջ երեքը մէկ միտք միտքի բերած սկսած էին գլուխը տանիլ խեղճ մարդուն, ստիպելով որպէս զի երեկոյթին գէմ չի կենայ, և դուռ դրացի հրաւիրելով՝ փալուն soiree մը սարքէ ի պատիւ իր մեծահոջակ (.) անունին ի զօսանք եկողներուն և ի դիւրութիւն օրորդներուն ի ծախ, (հոս դրաբառը աղւոր փախաւ) :

— Կարապետիկ աղա, հիչ անտեղուանքը չես ամա, աչքդ գոցես բանաս ութօրէնքը կուգայ, ետքէն աճէլէի պիտի գաս տէ շաշըմիշ պիտի ընես ... կըսէ Տիկին Վերմին, ճաշէն վերջ աւելի ճեղով մը ակռաներուն մէջէն քէօֆթէին ջիզերը մաքրելով :

— Կէնէ ի՞նչ ֆօլեսա կը բանաք կոր նախիք, ինծի կուգայ քի բիրէլէնմիշ ես եղէր տէ ֆինկ ֆինկ կուգաս կոր ...

— Եաղմա չիգայ, աղջիկները աս տարի սուվարէ կուղեն կոր ...

— Ի՞նչ կուղեն կոր ...

— Սուվարէ, սուվարէ, բէք աղուոր կը հասկնաս կոր եա ... սուտ խուլ ես եղէր, աս տարի իլլէ պիտի ըլլայ նայէ ըսեմ, ես կոխ պիտի կայնիմ, չօճուխներուն խաթրը խօշ պիտի ըլլայ, չենք կարգեր կոր նէ պարէ քիչ մը օր ցուցունենք ...

— Կընի'կ, սուվարէն մուվարէն վաղ անցէք տէ տեղերնիդ ծանրը նստեցէք, ես վրաս ինտացնելու վաթիթ չունիմ, ատանկ բաները ֆոէնկները կընեն քի մէջերնին հիօ պիյօ ըլլայ տէյի :

— Անոր համար քի մէջերնին հիչ աղապ աղջիկ մը չես գտնար, բիւթին մէյմէկ մանչու կոխ ելած են նէ, ասանկ սուվարէներու երեսէն է իշտէ ...

— Քա ի՞նչ տեղը կայ քի, ճիճի ունիմք պէս սիւրիւ մը հալիւր տունս լեցունեմ, թա-

խըմ մը մասրաֆէ ելլամ, տիօր լուս ալ քը-
նատ մնամ ...

— Դուն պտուկէ ճանրմ, մութլախ նստէ
ըսողը ով է ... հէմ ատէթը ան է քի ա-
նունին տէրը՝ տունին մնածը, կէս գիշերին կը
քաշուի քի ճաշիլ ճիւղիւ էյլէնմիշ ըլլան,
դուն սէրէն տիրէյիլի պէս պիր տուգ օռթան
տնկուիս նէ խէյֆ կընեն, հիշ էյլէնմիշ չեն
ըլլար:

— Ծօ էյի՞ եա, զօռս ի՞նչ է ...

— Քա ճանրմ անունդ չէ՞ մի ...

— Էյ անունս է տէյի նէ մութլախ բա-
նայի՛ր պանալու եմ տունին մէջը ...

— Աման քեզի ալ լախըսը հասցունելու
չեմ, իշտէ բան մը քի պիտի ըլլայ, նաֆիլէ
սիրտ հատցունելըդ պօշը չէ՞ ...

— Հա՛ ... ըսել է քի դուք խարարը
տուէր էք, հա՛ ...

— Հապա՛ ... տավէթիները պիլէ հա-
զըրուեր են, դուն մինակ ուտելիք, խմելիք
մտմտայ, սնտուկ մը մում իլէն սնտուկ մըն
ալ կազ առ քի լուսցունենք պիտի, գործը
անանկ կը բերէ կոր ...

— Ճուվալ մըն ալ սապօն բերենք տէ,
պախալի խանութ մը բանանք նէ չըլլա՛ր:
Կընիկ դուն հիշ խելք ըսուած բանէն մըս-
խալ մը օլտուն չունիս ...

— Պէրէքեաթ խելքիս քի չօճուխները
քշուին պիտի, քեզի մնայ նէ էլոխնին մէյ-
մէկ քօլալը պոսստէլա, հայտէ մարապետ-
նոցը ...

— Չիյտեմ, ինծի կը հարցունես նէ բէք
պօշ բտն է, ֆախաթ էյէր ըսես քի եա աս
սուվառէ խառնախտին պիտի ըլլայ եա չէնէ
սօլուխս Պատրիարքարան կառնեմ տէյի նէ՛,
նամուսիս համար կընեմ ...

— Ինծի համար չէ, ինքդինքիդ եկուր,
եա վարի աղջիկները կը մեղքընամ կոր, ա-
նոնք ալ ճաշիլ են, սօխախէն զարգալաթծի
մը կաննի կոր նէ տէլիխանը է տէյի բէրտե-
ներուն տակէն ըռէնկ ըռէնկ կըլլան կոր ...

— Էյ ըսել է քի ատ գիշերը եկած տէ-
լիխանըները տեսնալնուն պէս ճաթան քա-
շեն պիտի ... դուն վազ եկուր կընիկ, աս
գործին մէջը սախաութին մը պիտի ելլայ
զէրէ, մերինները բէք թօյ են, կելլան պիր-
տէն պիրէ նէ օլտումս կուգան տէ ...

— Ես ան աս չիյտեմ Կարպիսիկ աղա,
մէյմը սիրտս հոր է ըրեր, իլլէ քի պիտի ըլ-
լայ, ինչխըտար դէմ դնես նէ պօշ է ...

— Կընիկ առաջ Կարապետ էինք, ետքէն
Կարապետիկ եղանք, հիմա ալ փիսիկ մը պո-
չիս թախմիշ ըրիր եղանք Կարպիսիկ, ասոնկ
աղէկ ամա, մէյ մը իմ հալըս հարցուր քի
ասանկ պաշըտըշարը մասրաֆներ ընելու հալ
ու վախիթ ունիմ ...

— Ունիս չունիս պարտք ընես ընես պի-
տի, հասկցա՛ր, հիմաճուկուան զանցան ասանկ
կը վերցունէ կոր, պօյ պօյ աղջիկները հաս-
ցուցիր նէ անոնց նավզը նայելու ես, հօր մը
ճիտին պարտքն է քի ասանկ բաները նայի
ըլլայ ...

— Քա հօր մը ճիտին պարտքը կերցունել
խմցունել, հագուեցնել, ետքէն ալ վախտը
գայ նէ հանել մէկուն տալ է, ֆախաթ հիշ
չիյտեմ կորքի հար մը, պաշըտըշարը մաս-
րաֆները մոնայ տէ ան աս զիւպպէն էյլէն-
միշ ըլլան տէյի. իր տունին մէջ սուվառէ
տայ աղջիկներն ալ օռթան ձգէ, անոնք ալ
լօխմածիի չըրաիլի պէս սխմեն սխմեն թող
տան ...

— Իշտէ ինչ կելլայ նէ ատկէ կելլայ ...
երկուք կը սխմէ իւչիւնճիւին ծառքին կը
փակչի ...

— Եախօտ չի փակչի նէ կը փախչի ...
հէ՛ ... հայտէ կընիկ վազ եկուր, մենք ո՛վ ...
սուվառէ տուտըր ց՛վ, անանկ բաները ֆը-
ռէնիները կընեն, չիւնքի անոնց մէջը ճուռ-
ճինան սիւլուրեայ է, մեր աղջիկներուն չի
գար, իշտէ անունիս եկողներուն մանտօլի-
նին խապուխները շէքէր ճուրը կը ձգես
խախամ մը կուգայ, խըվալին գալուն պէս
վար կառնես քեասէները կը քաշես իքուամ
կընես, բէք նստելու ըլլան նէ լէպլէպի մը
կը հանես, եղաւ գնաց ...

— Ըլլա՛յ պիտի, ըլլա՛յ պիտի, ըլլա՛յ
պիտի, կըսէ տիկին վերծին ոտքի վրայ ել-
լալով և երկու ձեռքերը իրար զարնելով:

— Ան է քի անանկ սընըրներդ կը պոնէ
կոր նէ բէք աղէկ, ընենք ըլլանք ամա տիօր
մայիս խասապ պախալ չեմ ճանչնար, եկողին
տուվալէթդ տուր տէ ըսէ քի, պիղ պու-
սէնէ սուվառէ վէրտիք, սըռթըմըզտա նէ

կէօմէկ գալարը նէտէ պաճաղըմըգտա վար-
տիք ...

— Հա՛ շէօլէ, քա մարիկ քիչ մըն ալ
մարդս ուշմիշ ըլլալու է, հիմա նստինք տէ
սըրային դնենք առնելիքներդ գրենք քի չի
մոռնաս ...

— Առնելիքս գիտեմ ես, սառաֆ Թո-
ռոսէն տասը ոսկի չէ՞, վաղը կառնեմ ...

— Ես ատանկ բանի չեմ խառնուիր, ինչ
կուզես ան ըրէ Կարպիսիկ աղա:

— Քա ճանրմ մէյմը սա փիսիկը վերցուր
կընիկ, հազ չեմ ըներ կոր, տիօր քի պերնէս
ճուղապ առիք նէ փիսիկ եղանք, հիմա ալ-
թըխ Կարպիսը տեղը բեր ...

— Էյ բէք աղէկ, առնելիք իքուամներդ
չի շարեմ ...

— Չուզեր, առաջ սառաֆ Թոռոսէն առ-
նելիքս առնեմ տէ մէկալները խօլայ էն, ա-
մա կընիկ նայէ կըսեմ կոր, ան իրինկունը
պիչիմսիզ զիւպպէները տունս լեցունելու ըլ-
լա՞ք նէ, կատուի ետմուռի պէս անկաճնեն
պոնելուս պէս դուրս կը ձգեմ, նայէ ըսեմ ...

— Մեղայ ըսէ, աստեղը դպրատուն էր
զահէր, վարժապետ պիտի կտրիս, ատէթը
ան է քի տունին մենծը քէօլէն կանցնի կը
նստի սէյրճի կըլլայ ...

— Հախ ունիս, սէյրճի կըլլայ քի նա-
յինք աղջիկներս ինտոր մաճունճի թապլասի
պէս կը դառցունեն կոր տէյի ...

— Էրկան լախըտը չուզեր, իշտէ որո-
շումը որոշում է, պիտի ըլլայ անանկ չէ՞
Կարապետիկ աղա՞ ...

— Էյ ... ատանկ ճիշերի դպճելիք ծա-
ներ մի հաներ, զաթը սիրտս սօխի զար է
դարձէր ... հա տէտիք ...

— Արեւդ սիրեմ քի եաղը բաշավուայի
պէս պիրտէն պիրէ փառլամիշ կըլլաս ամա
ետքէն ալ սինմիշ կըլլաս ...

— Տէ հայտէ ճիւղէի վախիթ չէ, կազը
մարէ տէ ամէն մարդ տեղը պառկի ...

— Կոնակիդ տաք խավու դնեմ Կա-
րապետիկ աղա՞ս ...

— Ինչո՞ւ, ո՞վ ըսաւ քի մսեր եմ տէյի...

— Ոտքիդ տաք խաբախ մը պերեմ ա-
ճապ ...

— Քա ի՞նչ կայ, ի՞նչ կըլլանք կոր ...

— Տաք ըխլամուր մը եփեմ աճապ ...

— Հասկցայ միտքդ ամա, աս թէրթիպը
սուվառէին էրթէսի օրուան պահէ քի խրուս
եղլամ, դող եղլամ նէ դէմ գայ, հիմա պէտք
չունիմ, ըսելով կը մեկնի սենեակէն ու կա-
զերը մարուելով ամէն ոք տեսակ տեսակ
երազներու մէջ կը ֆշտայ:

* * *

Սուառէին օրն է:

Կարապետիկ աղա ըստ սովորականին չու-
կան խանութը բացած իր գործերով կըզբա-
ղի, որպէս զի ցերեկին եղլայ պէտք եղած-
ները գնէ և կանուխկէկ տուն հասնի:

Երկու երիտասարդներ, էլլէմէ քէօմիւ-
րի պէս սեփ սեւ հագուած, բալթօներնուն
օձիքը վեր, ինչպէս նաեւ պիսիկներն, խա-
նութին ցուցափեղկէն ներս նայելով՝ կը սը-
լըքտրկան, ու Կարապետիկ աղան յաճախորդ
կարծելով՝ դուրս կեղլայ ու կը հարցնէ,

— Ի՞նչ, բա՞ն մը կուզէիք ...

— Այո՛, արդեօք քօթիլեօնի համար
սիււքուրդներ ունի՞ք ...

— Համմէ՞ ...

— Այսինքն քատուիլին մէջի վերջին ֆի-
կիւսին համար տեսակ տեսակ առարկայ-
ներ ...

— Օղլում կիթաիքճէ խօյին կը դուրցէք
կոր չեմ հասկնար կոր, նասը՛լ քատուիլ ...

— Այս իրինկուն սուառէ մը պիտի եր-
թա՞նք տէ, հոն անակնկալ մը ընել ուզե-
ցինք ...

— Աղէկ ամա ատանկ բաներ չեմ ծա-
խեր, աս ըսածնիդ ինծի կուզայ քի նոր ե-
լած մօտա պիչիմ պաներ կն ...

— Այո՛, ո՞չ ... բայց երթալիք տեղեր-
նուս համար նոր կրնար ըլլալ, որովհետեւ
ամբակում սուառէսի է, հա՛, հա՛, հա՛ ...

— Աղէկ ամա Ամբակումի անուն չէ գիտ-
նալըս ...

— Այո՛, բայց ամբակում ըսելով վար-
նոց, պայաղի ըսել ուզեցինք, կը ձայնէ միւս
ընկերը, որ հապըռէ պիսերը կուորէր ...

— Աղէկ եւ՛ ... ատանկ պայաղի սու-
վառէի մը նասը՛լ իրթիքեապ կընէք կոր
միւսիւսներ, նայեցէք դուք ֆիտանի պէս տը-
ղաք էք, սիւրիդիլէ ...

— Այո՛, սիւրիդիլէ ըսել կուզէք կոր,

բայց եկուր տես որ ատանկ տեղեր գործ կել-
լայ ... կը հասկընաք ես ...

— Էյ նա՞սը մարդ է, հէլպէթ խալապա-
լըս պիտի ըլլայ, ափ կընէք հարցունելուս,
սանկ իրար բէք թէղ ճանչցանք ամա ...

— Սյո՛, երկու աղջիկ ունի եղեր էլէ
կէլիր, հէլպէթ տասուերկուք ալ դուրսէն
կըլլայ ...

— Հը ... էյ հրամանքնիդ տալէթլի
էք ...

— Ո՛չ ... մենք ուրիշներու հետ պիտի
երթանք, արդէն ասանկ երեկոյթներու այդ-
քան բարակը չի բնտուրի, մանաւանդ որ
մենք ...

— Հասկցայ օղլում, էյ ատ մարդուն ա-
նունը ի՞նչ է եղեր քի ...

— Կարապետ ըսին, Կարպի՛ս ըսին, Կա-
րապետիկ ըսին չիյտեմ, քիչ մը սէրթ մարդ
է եղեր ամա, կընիկը ճատալոզ է տէ բամ-
պակի պէս է ըրեր եղէր էրիկը ...

— Ինչալլահ ծով ալըրի է ատ երթալիք
տեղերնիդ ...

— Ձէ ... գիւղին մէջը, նանէճի ախտէ-
րին քովի տունը ըսին ...

—
Ղովտին պէս քար կտրող Կարապետիկ
աղան, երբ կը լսէ թէ նոյն այդ զիւպպէնե-
րը ուղղակի իր տունն էր որ պիտի այցելէին,
դէմքը կախելով կը պատասխանէ,

— Աղէկ ամա օղլում, գիտնալըս աս օր
ան Կարապետին սիրտին է ինչէր տէ սու-
վառէ ֆիլան ետ է մնացեր, դուք գիտէ՛ք
ամա, նաֆիլէ գահմէթ չընէ՛ք նէ դուք կը
չահիք, աս հալային ...

— Տէր ողորմայ, տահա աս առտու ը-
սին քի երկու օր է ուտելիք ֆիլան կը կրէ
կոր տէյի, դուք ի՞նչ կըսէք կոր ...

— Հա ամա ես մօտէն կը ճանչնամ, հէմ
ալ սէպէքի պիր տիւղ մէկտեղ ենք, նա աս
թեւիս վրայ մարեցաւ տէ տուն տարինք
զալալլըն ... հայտէ օղլում կացէք հան-
ուեցէք, աս չամուռին վրանիդ եօխ չըլլայ ...

— Դուք սխալ ըլլալու էք, ինչ եւ է,
մենք երթանք տէ, ըսելով կը մեկնին մօտէն,
մինչ Կարապետիկ աղաին մտմտուքը կառնէ:

— Ծօ նէ խալթ եէր, պու հէրիֆլէրի
քիմ տալէթ էթտի ... չօգ չէյ ... ծօ հէք

կէլէկէր պէօյլէ սուլու եուսուրթայ օրածադ
սա, սապահա գարչը պիր ծուածեղ եարմա-
լը ... Վա՛յ Կարապետ վա՛յ ... իշին վար
պու ագչամ ...:

Նոյն միջոցին կին մը խանութէն ներս կը
մտնայ, սպասուհի պիշիմի ...:

— Բարի լուս ...

— Ասծու բարին, ի՞նչ է ան, ի՞նչ կու-
ղես ...

— Մատամըս ըսաւ քի, գնայ չարչին նայէ
կէօքսը բաց իփէքլի լաթ կայ նէ քիրայով
մէկ գիշերուան համար առ բեր տէյի ...

— Քուրիկա ան կըլլայ ամա բարեկեն-
դանին, հիմա չիգայ ... ի՞նչ պիտի ընէր քի
ատ լաթը ...

— Ձիյտեմ աման, աս իրինկուն Կարա-
պետ է ինչ խառնախսի է, ճիւմպիւշ ունի
եղէր տէ պիտի հագնի երթայ ...

— Էյ մութլախ կէօքսը բաց պիտի ըլլայ,
գոց ըլլայ նէ չըլլա՞ր ...

— Ի՞նչ գիտնամ անանկ կուղէ կոր ...

— Էյ ատ Կարապետին տունը ո՞ր է քի ...

— Իշտէ նանէճի ախտէրին քովը ըսին,
քուղում ուշ մնացի, ո՞ւր կընամ գտնար ...

— Ինծի նայէ կընիկ, գնայ մատամիդ ըսէ
քի, ան Կարապետիկ աղաին սիրտին ինչեր
է, սուվառէն ալ ետ է մնացէր տէյի ...
նաֆիլէ մասրաֆը թող չի մտնայ ...

— Ձօգ չէյ ... աս ամէն մարդ հազըր
են եղէր քի երթան տէյի, մեր զիմացի տու-
նէն երեք գիշեր կազի լուսով նստէր պլուղա
կը հասցունեն կոր ...

— Աղէկ ամա, Կարապետին ալ տէրտէր
իլէն հաղորդութիւն կը վազցունեն կոր ...
հայտէ տուն գնայ ըսածիս պէս ըրէ:

Կինը կը մեկնի:

— Այ սանայ պիր տահա, ծօ պունլար
հէր պիղիմ պաչըմըզա՛մ բաթլայաճադ ... չօգ
չէյ ... չըլտըրաճաղըմ: Ա՛խ ... Վերթին,
բիւթին քուկին թէրթիպովդ է քի կը քա-
չեմ կոր ...: Ու հազիւ թէ իր գործին պի-
տի զբաղէր, յանկարծ տարեց մէկը խանութ
մտնալով,

— Բարի լուս ախպար ... Կարապետիկ
աղան հրամանքնիդ էք ...

— Ես եմ ի՞նչ կայ, խեր ըլլայ ...

— Աստուծո՛ւ սիրուն վաղ եկու՛ր պէ՛, ոտքդ պագնեմ, էօլիւմ պիտի ելլայ ...

— Խե՛ր ըլլայ, ի՛նչ է եղէր, ի՛նչ կրնեմ կոր ...

— Զաւակներուդ արեւուն վաղ անցիր, տղաս ծառքէ կելլայ կոր ...

— Ծօ տուր պագալում ... ի՛նչ եղաւ ճանըս, նէ՛ օլմուշ ...

— Աստուածդ, Քրիստոսդ կը սիրես նէ ետ կեցիր, ի՛նչ ուզես նէ Աստուած քառասուն պատիկը պարգեւէ ...

— Խոստովանա՛նք կըլլանք կոր ի՛նչ է, չեմ հասկնար կոր ...

— Կրնանդ արեւուն, մեռելներուդ հոգուն համար ըլլայ մընէր ...

— Ուշտուրտու՛ք ... ըսէ նայիմ ճանըմ ի՛նչ եմ ըրէր քի չընեմ կըսես կոր ...

— Աս իրինկուն սուվառէ ունիս եղէր ...

— Չունեցած ըլլայի ... է՛յ ... ետքը ...

— Էկէր խապիլ է նէ մի տար, տղաս ծառքէ կելլայ կոր ...

— Ճանըմ իրաւ քի ես ալ տալու թառափը չե՛մ ամա, իմ սուվառէս իղէն քու տղադ ի՛նչ կապ ունին իրարու հետ, ան չեմ հասկնար կոր իշտէ ...

— Պէ՛ պապամ, շաքաթ մը առաջ եկեք տունը ըսեր են քի հրամանքներնուդ համար խըյախ սօյէն սուվառէ մը պիտի տայ տէյի, իմ ճահիլս ալ թիֆօյէն նոր աղեկցաւ, տահա կէս ֆառնճէլս իլէն սիւտ կուտէ կոր, ելաւ քի իլէ էս ալ պիտի երթամ, հոն ճուռճիւնայ կայ տէյի, հիմա դուն ըսէ, ելլայ խըռսէն իւզիլիկ ընէ նէ, մեռնի նէ, կիւնահ չէ՛, քսանը նոր լմացուց ...

—

— Եանի մեռնելուն սէպէպ պիտի ըլլաս, ըսեմ տէ, էկէր Քրիստոսեայ էս նէ չես ընէր ...

— Նայէ քի քեզի ըսեմ ազբար, ինծի մնայ նէ ես հիմա Կարապետ ըլլալս կը ձգեմ, Պօխոր կըլլամ քի անունս չըլլայ տէ սուվառէ չիտամ տէյի, առաջ քէսէիս վէ պատիւիս համար, ֆախաթ կընիկները տեսա՛ր մի, ֆիթիլը առեր են, իմ ծառքէս ի՛նչ կուգայ ...

— Խըյանէթ, էկէր խօսք չի կրնաս հասկըցունել նէ գիտցած եղիր տղուս սիրտին

տէրտ չըլլայ տէյի, սէթեան դնեմ, եօռղանին մէջը բաթթեմ պերեմ պիտի ... ըսելով կը մեկնի:

— Վա՛խ Կարապետիկ վա՛խ, սօնը սօնը էվինի տէ հաստախանէյէ չէվիրտին ես ...:

ԼԻԼԱ

Յ. Գ. — Յաջորդ թիւով պիտի նկարագրենք բուն իսկ սուռաէն, իր էն տաք զուարճալիքներովը:



ԽՆԴՈՒՔ Յ. ՀԱՃԵԱՆԷ

Հիւանդ մը կըսէ բժիշկին.

— Միւսի՛ւ, ինչ ալ այցազին հինգ ֆըրանգ կը պահանջէ՛ք:

— Այո՛, ինչպէս ուրիշներէն:

— Բայց կը մոռնա՛ք թէ ծաղկախոտն ես տարածեցի թաղին մէջ:

* * *

— Լսեցի՛ր, Խաչիկին աղջկանը մանչ դաւակ մը եղեր է:

— Քա ի՛նչ կըսես կոր, կարգը-ւելին ինչ խըտար եղաւ քի:

— Կիտցածս անցած Ս. Յակոբին էր հարսնիք ըրին:

— Խելքդ կըլիսդ ժողուէ կնիկ, Ս. Յակոբէն մինչեւ հիմա վեց ամիս անճախ անցաւ:

— Իրաւ ես ամա, սէպէքի երեք ամիս մնալ նշանած մնացին, կէնէ հիսապը թամամ է:

* * *

Հարուստ սեղանաւոր մը կը հարցնէ իր սպասաւորին.

— Պագսանս՛ Կարապետ, պագալում պու-Զատիկաէ նէ՛ քէստիրտին.

— Էֆչնտիմ, իքի բարչա չէյ:

— Նէ՛, նէ՛:

— Պիրի սագօմուն էթէքլէրինին բիւրիւղէրի, տիկէրի տէ սայնիդտէ էվլէնճէք իւմիւտիւմ:

[illegible]

ՄԵՐ ԱՄԵՆԱՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՆՊԵՆ ԵՒ...

ԱՆՄՕՐՈՒՄ ԳՐԶԵՂԲՕՐ

ՎԱՂԸ ՄԻՒՍ ՕՐ ՀԱՒԱՍԱՐՈՂԸ ԱՆ-

ՆՄԱՆ ԴՐԵԱՆՑԻՆ...ԵԹԷ ԱՇԽԱՏԻ

ԲԱՆԻԻ ԵՒ ԳՐԶՈՎ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԻՆ՝

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆԻ

ՇՈՒՐՋԸ

Որ նպաստ մը կուտայ իրեն եւ իրմէն անբաժան եղող... ազնուատուք քրտակին: Ի խորոց արտի կը մաղքեմք որ այդ ազնուատուք... ունեմայ մեր ... ազնուատուքներուն պէս:

Ամենատիրեցեալ բարեկամս Ամբակում,
անցած չարթու ծագիկներու շուրջը ըրած
պըտումներէն յոգնած, երբ ներս գալով
բազմեցաւ թաւչապատ բազմոցին վրայ,
ուղեց որ չպուխին կրակ դնեմ, չպուխին
որ ժի՛ղ դարէն ի վեր անընդհատ կը խմէ և
որուն վրայ, ժի՛ղ դարու դէմքերուն... կը-
մախքները երեւալէ ետքը, անթիֆանի մը՝
յատուկ ... եռածայն ուսումնասիրութիւն մը
պիտի ընէ անոր չպուխին վրայ, և գիրքը
որ... չպուխածեւ պիտի հրատարակուի՝ հե-
տեւալ վերնագիրը պիտի կրէ... չպուխածեւ
տառերով (եւ զարմանք պիտի պատճառեն
նոյն իսկ... Ս. Ս. Սահակ-Մեսրոպպին եթէ
հրաշքով ողջըննային). «Ամբակումին ժի՛ղ
գարու չպուխը»:

Քանի մը անգամ ժիւ դարու չպուխը
քաշելէ ետքը ըսաւ .

— Իմացայ, . . հեռաձայնով որ, կատակեր-
գական եւ զուարթարանն Երուանդ Թօլսեան,
Նպաստ մը պիտի տայ եղեր.

— Սյո Սմբակում.

— Ուստի պահ մը անոր վրայ խօսելու
ենք.

— Կամ թէ սյրտումներ ընելու ենք.

— Ζωὴ μακάριε.

— Գանի որ Թօլան մերն է .

— Հա՛ տղաս... է ժողովրդականագրա-
կանութիւն .

— Այսինքն, Թօլստն, մերը ըլլալուն հա-
մար մերը կըսեմ կոր, զօր օրինակ, եթէ
Թօլստն մերը չըլլար ինչպէս կրնայի ըսել որ
Թօլստն մերն է...

— Հասկցա՛նք այդ թօլայաբանութեանէդ, եւ եթէ, հասկցա՛նք այդ թօլայաբանութեանէն մինչեւ որ չըսեմ, պիտի շարունակես թօլայաբանութիւնդ, մինչեւ այն ատեն երբ ըսեմ հասկցա՛նք թօլայաբանութեանէդ, եւ դուն ալ եթէ շարունակես թօլայաբանութիւնդ՝ բանեմիս բուրդ է, քանի որ, թօլա թօլա թօլա միշտ շարելով գրաշարը, Բաճալին մէջը գտնուած թ գիրը՝ որ թօլայեան մականունին զկղբնատառն է՝ հասնելով, կայանք պիտի տայ գրաշարը մեր թօլայաբանութեան. տարրեր բան թէ, եթէ գրաշարը հանած վարած մըն է՝ շարունակէ մեր թօլայաբանութիւնը թ ի տեղ Դ դնելով, ինչպէս որ հաա առաջին օրինակը կուտայ Դօլան Դ ով շարելով...

Հոս Ամբակում երկար շունչ մը առաւ և
բաւ հայրական չեչոտով մը .

— Տղա՛ս, Թօլստան ըսել ու անցնիլ չըլլար... առանց երեք վայրկեան կենալու... Ղալաթիոյ Թիւնէլին պէս: Պէտք է որ անոր ըրած օգտակարութիւնները շօշափենք... Թոլմաս առաքեալի սխաթմով, Թօլստան նախ բօխչի է... առանց բժշկական վարժարանի մը դռնէն... ներս նայելու. եւ այսօր կրնանք զինքը դասել համբաւաւոր բժշկացի դասը, և քանտիտա ներկացնել... Բժշկական Կաճառին Բարիգու...:

Թէ ինչո՛ւ .

Մտիկ ըրէ տղաս: Խնդալը առողջութեան
չափ օգտակարութիւն ունի: Նախ լեարդին...

— Որուն Տաճկերէնն է գաւառ երկիր և
որուն համար մեր կառուն իր լեարդը կը
թրթռանէ :

— Դուն ալ տղաս իւարդդ կը թրթռա-

ցնես... ճիշդի բեղապի համար: Խնդալը մարտդական գործարաններու կանոնաւորութիւն կուտայ, կը մաքրէ կուրծքը եւ թոքերը եւ օդափոխութիւն ընել կուտայ:

— Օդափոխի մահկանացուներու պէս թերեւս:

— Խնդալը ուղեղին գործունէութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի. նաեւ կը վանէ ձանձրոյթը. միշտ խնդացող մարդու մը մտածումը յստակ կըլլայ:

— Գարագուլաքի ջուրին պէս:

— Եւ այսօր, Գաղղիացիք իր զուարթագիրները՝ մարդկութեան բարերարները կը հուշակէ, «Ապրիլն, կը պոռան, Մէյրաքներ, Լապիշներ, Գաբիւսներ, Քուրթլիներ» այո մե՛նք ալ, աղէկ մը համոզուելէ ետքը սակայն, պէտք է ըսենք, «Ապրիլն, Լիւններ, Ալֆրիսներ, Թօլիսներ, Տիւլիներ եւ ամէն անոնք՝ որոնք զուարթ կը գրեն»:

Եւ ահա ինչպէս մեր Թօլան, կատակերգակնիս, զուարթարաննիս՝ մեր բժիշկը կըլլայ՝ ամէնուս բժիշկը, ամէնուն բժիշկը (Թէոդիկ էֆէնտի տարեցոյցին պէս՝ որ ամէնունն է) այո ամէնուս բժիշկը՝ որ իր դեղագիրները կը մրտէ... Մանգուսի շաբաթօրեայ թիւերուն վերջին էջին վրայ:

Ահա, ամէնուղ հոգեհատորը, Երուանդ Թօլանը, ձեր... անձնական բժիշկը, այս Կիրակի նպաստ ունի՝ ո՛վ զուարթախոհ օրհնեալ ունկնդիրները Ամբակումի...

Ուր, Թօլան, վստահ եղիք, նրբառուեստ կատակերգակ՝ ԱՀՄԷՏ ՖէշիՄ էֆէնտի հետ՝ ո՛չ թէ մինակ ձեր անուշիկ դէմքերը կրնան խնդացնել, այլ եւ ձեր ձեռքերն ու ոտքերը... եթէ ժպտելու բարի սովորութիւնը ունին՝ այդ աղնուաշուք անդամները... մարմինին:

Ասոնք ըսելէ ետքը Ամբակում ելաւ տեղէն ու սենեակէն դուրս ելաւ:

Ո՛վ Բերացի մահկանացուներ իմացա՛ք:

Ո՛վ Սիւրտարցի մահկանացուներ տեղեկութիւն ունի՛ք:

Ո՛վ Վոսփորցի մահկանացուներ լսեցի՛ք:

Ո՛վ Գում գաբուցի մահկանացուներ խապա՛ր էք:

Ո՛վ Սամաթիացի մահկանացուներ ականջնուտ հասա՛ւ:

Ո՛վ Մագրիդիւղցի մահկանացուներ արդեօք տեղեկացա՛ք:

Ո՛վ Սալմաթումբուքցի մահկանացուներ նախընտրե՛ն...

Որ Թօլանն նպաստ պիտի տայ, և որուն տեղութեանը ա՛յնքան պիտի խընդաք որ, եթէ առողջութիւննիդ խանգարուած է՝ պիտի ապաքինիք, եթէ չէ՝ խանգարուած, առողջութիւննիդ հաստատուն հիմերու վրայ պիտի զնէք... օրհնութեամբ Թօլաննի:

Միտքս բան մը ինկաւ:

Օր մը Թօլաննին գացիք էի. կատակերգակը ոսպ սը շամպլ՝ մը հագած նստած էր՝ վրան ձերմակ թուղթեր կրող գրասեղանի մը առաջքը, ու մէկ ձեռքը գիրք մը բռնած կը կարդար՝ միւս ձեռքովը քանակի մը հետ խաղալով: Եւ կարծելով որ այդ կարդացածը ֆեն սը սիեֆական գիրք մըն է ըսի:

— Ի՞նչ է՝ ատ կարդացածդ:

— Ռէնանի Քրիստոսի կեանքը:

Ատ օրէն մինչեւ հիմա կը զարմանամ դեռ: Չարմանքիս առջևը ստորակետ մը դրնելով իր նպաստին պիտի մասնակցիմ...

Ամբակումն ալ խօսք տուած է գալու:

Ուստի, Ամբակումը տեսնել ուզողներ՝ պիտի տեսնաք զայն, քանի որ, վարագոյրը բացուելէն տասը վայրկեան առաջ՝ Ամբակումի հետ թեւ թեւ սրահէն ներս պիտի մտնենք:

Սակայն, սո՛ւսսսսսսս, լռեցէք:

Ո՛հ թռչուններու դայլայլկներ ականջիւ կուգան կոր. ի՛նչ անո՛ւշ, ի՛նչ անո՛ւշ:

Ահա դադրեցան թռչունները երգելէ:

Եւ հիմայ կը լսեմ շատրուանի մը ցայտքը ջուրին...

Չր՛բ...չր՛բ...չր՛բ...չր՛բ...

Կարծես թէ ջուրը կը բարձրանայ ամպհովանիի մը պէս եւ վար կը թափի՝ աւազանին մէջ:

Աս ջուրին ձայնն ալ դադրեցաւ, և ահա հիմա կը լսեմ, այո՛ կը լսեմ կալվոս-բոլեան: Քիչ մը ետքը աս ալ կը դադրի և Ամբակում կերեւայ ջութակի ի ձեռին:

— Տո՛ւր, Ամբակում, տո՛ւր ձեռքդ՝ այդ ջութակին վրայ հրա՛շք գործող ձեռքդ պագնեմ՝ ո՛վ իմ փառքս:

ԱՆՄԵՌՈՒԿ



ԲԱՑԱՌԻԿ ՆՊԱՍՏ

Ի ՊԱՍՏԻՒ ԹԷ Ի ՆՊԱՍՏ ...

TOUS LES DEUX

ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ԲԱՅԼԱԶՈՒՆ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆԻ

ԷՐԵՐԱ ՎԱՌԻԷԹԷ ԹԱՏՐՈՆԸ

Կիրակի, 20 Յունվար 1908, ցերեկին
Ժամը 8 (Ը. Թ.)

ԶԱՒԵՇՏԱՔԱՀՔԱՀԵՐԳԱՊԱՐԱՆԱՌՆ

ՑԵՐԵԿՈՅԹ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՖԷԶԻՄ ԷՖԷՆՏԻ
Ե Ի

ԾԱՅՐԷ Ի ԾԱՅՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՄԵՐ ԵՒ ՁԵՐ ԹՕԼԱՒՆ

ԽՆԴԱԼԱՐՈՒԺՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՄԸ

Ուրեմն Կիրակի ցերեկ գացե՛ք ծափա-
հարել Ե. Թօլայեանը ... եթե տեղ չտեսնա՛ք:

Դիմերը սուղորական, խաղերը արտասովոր, ահա առաւելութիւն մը զոր պիտի վայելեն
ամէն անոնք՝ որոնք պիտի երթան լեցնել Ե. Թօլայի Դանայեան զրպանը:

Հիմա պիտի ըսէք թէ արդեօք ի՞նչ խաղեր պատրաստեր է մեզ Թօլան:

ՏԻՒՐԱՆ ՏԻՒՐԱՆ

Իրա՛ւ, խաչ որ չեմ հաւատար պիտի ըսեն թատերասէրներէն չատեր, անանկ է նէ
հիմակուրնէ երթանք ...:

Աւելին կայ: Հապա ՏԷՐ և Տիկին Շառլէթթինը ... որոնք չիք Բառիդիէն օրէնէթ-
ներ և տուէթթօներ պիտի ըսեն ...:

Հապա նշանաւոր պարուհին, հապա հռչակաւոր թէնօրը, հապա Մինեօն Վէրթինին ...
հապա ... նուագախումբը, Կալուօշ բօլքան ... et encore:

Ուրեմն չարժէ՛ր միթէ՛ փոխանակ Կիրակիի ցերեկը տանը չորս պատերուն մէջտեղ, վա-
ռարանին մօտ սատկցնելու, երթալ և վայելել այս արտասովոր մաքիճէն, որուն յաջողու-
թեանը համար խեղճ Թօլան ութ օր է քուն քնացած չունի ի հանգիստ թատերասէր հասա-
րակութեան և ի նպաստ իր միշտ տէլիք զրպանին:

Մենք մեր կողմէն 140,000 յաջողութիւն կը մաղթենք մեր սրամիտ աշխատակցին, և
ջերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողները որպէս զի չի զբոլուին այս նմանը շատ քիչ
անգամ տեսնուած ...:

Դացէք որ տեսնա՛ք:

ԽԱՍԳԻԻՂՑԻՆ

ETUDE

Փոխն ի փոխ, քանի մը գիւղի օրիորդներուն և պարոններուն ապրելակերպը և կենցաղը Հանրագիտակի այս զուարթ էջերուն մէջ տեսանք: Հիմայ՝ մնաց խառնուրդները, որ գրեթէ միւս տեսած գիւղերնու ֆոնմոքն է:

Սիրելի ընթերցողներ և ուհներ, երբ խառնուրդները դպրեցիք խօսքեր մը գրչիս ծայրէն սպրդած ըլլան, մտածեցէք թէ ես ալ այդ մանկանացուներուն շարքէն եմ ... հոգ չէ թէ անմահ ըլլամ... անուամբ:

Խառնուրդի երկուստեք՝ բեք ծիրին, կիրկիր, և ... քոհաճ կ'ըլլայ ու ակապալ՝ չափէն աւելի անձնուէր:

Բագոսի պարգեւներէն գրեթէ չ'ախորժիր ան, բայց ... կոյր Գրիգոր աղան ջուր թակի ձայնէն՝ չ'ատ:

Ամէն իրիկուն գործէն դառնալուն անպատճառ աղքատ մը նաւամատոյցին գլուխը գտնուող Պ. Մըկըրին վարձած գազիֆոն կը հանդիպի, նախ ծանօթները բարեւելու և յետոյ քիչ մը «չըջուն տպարան» անուն անմահ ... մանկանացուն հետ իյնալու համար: Սուրհանդակներուն համար հոգին կուտայ և սիրաբ... հոն գտնուող հրէականներուն: Շատ լաւ կը պարէ ան, այնպէս որ՝ սուրհանդակներուն սուրհանդակներուն կ'ըսէ...

«Թաղական աղա» կոչուելու զօռ մը չունի և չ'իսկնդենար ատ բանին համար:

Երեք ամիսը անգամ մը կը նշանուի, սակայն երբեք մեծ այլոն ըսելու բարեբաղդութիւնը չունենար, որովհետեւ ամէն անգամ աղջկան կողմէն նշանը ետ կ'ընեն, քանի որ տղուն՝ Սառինա, Բաշէլ, Եսթեր անուամբ ծրմբ մը ունենալը երեւան կ'ելլէ... հարիւրին հարիւր:

Մասնաւորաբար ձմեռը, կիրակի օրերը Բերա կ'երթայ զբօսնելու, իսկ ամառը՝ կամ Գեղարտիստէն և կամ Բարաղաճ ... չիֆթեկ ճաղարա մտիկ ընելու համար:

Գրականութեան սիրոյ սահմանը պաշտօնուն հասած է, և գրադէտներուն պօռ մարդ մակդէրը չի տար եւ կը սիրէ զանոնք,

բայց ... մասնաւորապէս Միամիսի մը արկածներին պէս գործեր արտադրող հեղինակները:

Օրլախիուքեան Ա. մրցանակը պէտք է տալ խառնուրդներին, եթէ չէք հաւատարմութիւն, թղթակից անմահ մանկանացու շրջանապարհին հարցուցէք. ասկից զատ հոլաւսա ըլլալէ չ'հրաժարիր:

Կեանքէն յափրացածի երեւոյթը ունի և ամէն անգամ որ անոնցմէ մէկուն ըսեմ.

— Եղբայր, սա պիտի ուղծ ծայրը վե՛ր առ...

— Աման ճանրմ, չհաւնողը թող պզտիկ աղջիկը տայ, վրայ կը բերէ:

Վերջապէս խառնուրդին ներդաւած է, սակայն քիչ կը ներէ իրեն և շատ ուրիշներուն, հետեւաբար կը յուսամ թէ՝ ինծի ալ մաս պիտի հանէ իր ներդաւածութենէն, իմ այս ըրած անտեղի քանի մը անգաղանապահութեանս եւ կամ լաւ է ըսել՝ շաղակրատութեանս համար, եւ զիս անհունս երախտապարտ պիտի թողուն... մինչեւ յաջորդ տարի, իրենց սիրեցեալ նախաժողովին՝ Ս. Ստեփաննոսի տօնախմբութեան օրը:

Et à la fin du compte ... գործնական մարդ է:

Եւ հիմակ որ քիչ շատ ճանչցաք խառնուրդի բալիստեան, եթէ կուզէք լրումը տեսնել այս երկուսի, տուններիդ տեղերնիդ խառնուրդ փոխադրեցէք, և զանոնք լաւ մը ուսումնասիրեցէք որ ընդարձակ երկուս մը պատրաստէք. բայց կ'արժէ, համմէ:

ՎԱՀՐԱՄ ԶՊԱՐԵՆՅԱ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՌԷՔԼԱՄ...

Ուրախութիւնով կը յայտարարենք որ, հին ժողովրդական գրչիներ հետզհետէ իրենց մասնակցութիւնը կը բերեն Հանրագիտակի: Ասոնցմէ մէկը ՏիՇԼԷԿ այս շաբթու... մեր տունին մէջն է և խոստացած է ասկից ետքն ալ իր զուարթ գրչին արտադրութիւններէն չգրկել մեր զուարթախոն ընթերցողները:

Յաջորդ շաբթուին ալ պիտի սկսի երեւիլ հին ժողովրդական գրչի մը՝ ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ՝ զաւելտական Ծաղիկի Շաբաթ քալան քոնիկներու հեղինակը:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Նկատելով որ մեծ գրագետները մէկ մէկ փաթիւս ունին, ինչպէս Հիւկո գրած ժամանակ գաւաթ մը ջուր կը դնէ գրասեղանին վրայ, Կի սը Մօբասան՝ խամածիկներ և Մերուծան Պարսամեան սեփօրէ ֆառք բօսքալ մը, Լիլա ալ կապիկ մը սկսած է դէմն առնել՝ երբ ուզէ արտագրել իր զաւեշտականները:

ՍԿԻՒՏԱՐ. — Անցեալ կիրակի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ տիկին մը ցուրտ խածած ոտքերը քերել տալու համար կոշիկները հաներ և մոմճի կնկանը մէկ զրուշի սուլօ ընելով հանգստացեր է: (Դաւ կիրակի չամաւոր ալ փոխեցէք տիկին, ու ընտւ մի քաշուիք Մ. Խ.):

ՆՈՅՆ. — Նշանաւոր և տիկ սեպտեմբր-մօսիկն Շիրքէթի 41 թիւով Բերա անցաւ: (Չեմ գիտեր թէ Բերացի կարգ մը հօբպիլիպիմօմ մատմագէտներէն ուրիշ ո՞վ կրնայ հետաքրքրուիլ այս լուրով որ, ամէն տարի այս եղանակին ֆէյի պոլյնուզիի պէս մէջտեղ կը նետուի. Մ. Խ.):

ԲԵՐՍԱ. — Հոս սալօններու է՛ն մեծ նորոյթն է ձեռք պագը: Երիտասարդներ սկըսած են գացած տուններնին բարեւելէ առաջ տիկիններուն և օրիորդներուն ձեռքերը համբուրել:

ԴՈՒՄ-ԳԱԲՈՒ. — Ատ սուլու մօտանքէօրիւէն մ'անցունէք ... ետքէն չենք խառնուիր...:

ՍՍՄԱԹԻԱ. — Ուստամըն տէտիյի...:

ՍԿԻՒՏԱՐ. — Նայինք ինտոր կըլլայ կոր...:

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Սիրով կընդունինք այդ սիսթէմը...:

ԻԶՄԻՐ. — Տեղւոյս չոր ինճիրին համահաւասար պարծանքն եղող Ալփիարնուս մեկնելէն ի վեր յոյն սպասուհիներու բիացան շատ վար է: (Ըսել է թէ ֆիստանի տեղ հագածնին ալ շալվար է. Մ. Խ.):

ԻԶՄԻՏ. — Կանխիկ դրամ չտալնուս համար քաղաքս հասնող միայն մէկ երկու Հան-

րալիսալնէրը ձեռքէ ձեռք քսչուելէն առ ընթեռնի վիճակի չի հասցնելու համար կը խնդրենք որպէս զի գոնէ այդ թիւերը մուխալայի վրայ տպուին: (Լաւ ֆեօսէի վրայ կը տպենք որպէս զի ամէնուդ դիւրամատ-չելի ըլլայ... Մ. Խ.):

ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Մերիններն ալ մէռմէ-ռի վրայ տպեցէք: (Մէռմէն ունինք բայց Կարապետ Պուռմաեանին գերեզմանին վրայ պիտի դնենք, իր պարտքին հաշուեցոյցը փորագրել տալով վրան. Մ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Շարաթ մը առաջ Կեյլի Գրենըլարէն թահիւտիւ նամակ մը ստացանք՝ վրան 15 կրամ գրուած, որուն մէջէն ... Իզմիրի մեր յարգելի գործակալ Մեծ. Կարապետ էֆ. Մալէճանեանի չնորհաւորական քաւթը ելաւ. կը խնդրենք Դըն-ճըլարի նամակագիրէն որպէս զի ընդհուպ այս հաւածինային բացատրութիւնը տալ հաճի:

ՕՐԹԱ-ԳԻՒԴ. — Մենք ինչո՞ւ զրկուինք եռաճախէն, մենք որ մէկ ոտքերնիս Բերա է և քիչ շատ ճաշակ ունինք: (Ճաշակ բառը կոճկեցէք ... քանի որ Զիլինկիրեանը չէք հրաւիրած. Մ. Խ.):



ԼՈՅՍ ԼՈՅՍ ԼՈՅՍ

Ահա՛ օրուան գրական նորութիւնը. ամէն տեղ ԼՈՅՍ՝ ամէն տեղ ԼՈՅՍ: Ա՛լ դժգոհելու տեղ չունին ամէն անոնք. որոնք գրականութեան անօրի ենք կը պօռային: ՀԱՆՐԱԳԻՏԱԿ եւ ԼՈՅՍ, ահա օրուան շաբաթաբերքեր ձեռքէ ձեռք, բերնէ բերան, մին լրջագոյն՝ միւսը քեքեւագոյն: Շաբաթը երկու դրուէ քերքի՝ քալ կուզէք, ԼՈՅՍ եւ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ ահա զտաւածները:

Արտօնատէր ԱՐԹԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏԳԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասցէսի թիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏՆԱԾ ԿԻՆԸ

Կանխմարտ ճաշարանապետին զարնուեցաւ, որ դռանը առջեւ տնկուած կեցած էր և որ զինքը բարկութեամբ մը հրեց, ինչպէս որ կընեն ճաշարանը գտնուող անձերուն հագուածքին հետ խոստոր հագուած մարդու մը, որ անպատուարեր կրնայ ըլլալ ճաշարանին պերճանքին: Կանխմարտ դողաց: Նոյն պահուն, բռնակցութեամբ պարոնը դուրս կելլար, Գինիլին կողմը եկաւ, ու երկուքը — ճաշարանապետը ու բռնակցութեամբը — Կանխմարտին փակած, մէկը կը հրէր միւսը կը քաշէր, անանկ կերպով մը որ, հակառակ իր ջանքերուն, հակառակ իր ուժեղ բազուկներուն, ինքն Կանխմարտ, մինչեւ գաւիթէն դուրս հանուեցաւ:

Անմիջապէս հաւաքում մը տեղի ունեցաւ: Երկու ոստիկաններ աղմուկէն հոտ եկած, փորձեցին ամբոյսը ճեղքել, բայց դիմադրութիւն մը զիւրեք անշարժութեան մասին, առանց կարենալու ազատիլ ուսերէ՝ որ զիրենք կը նեղէին, կոնակներէ՝ որոնք իրենց առջեւ ճամբան կը գոցէին:

Եւ յանկարծ, հրաշքի մը պէս, անցքը ազատ էր...:

Ճաշարանապետը, հասկնալով իր ըրած սխալը, ներողութիւն կը խնդրէ, բռնակցութեամբ պարոնը կը քաշուի քննիչը պաշտպանելէ... ամբոյսը կը ցրուի, ոստիկանները կը մեկնին, Կանխմարտ ներս կը մտնայ և վեց հոգիներուն կը մօտենայ...: Հինգ հոգի կան, չորսը կը նայի, դուռնէն զատ ուրիշ ելք մը չիկայ ...

— Ան անձը, որ աս տեղն էր, ըսաւ ապշած հինգ հոգիներուն, այո՛, վեց հոգի էիք, ո՛ւր է վեցերորդ անձը ...

— Պ. Տէսթրօն:

— Ո՛չ... Արսէն Լիւբէնը:

Սպասաւոր մը մօտեցաւ իրեն և ըսաւ.

— Այդ պարոնը միջնայարկը ելաւ:

Կանխմարտ ինք ալ միջնայարկը ելաւ: Միջնայարկը մասնաւոր սրահէ մը կը բաղկանար, և ելք մը ունէր ծառափողոցին վրայ:

— Հիմա՛ գնայ փնտռէ, մըմռաց Կանխմարտ, հեռո՛ւն է ...:

* * *

... Շատ հեռու չէր, աս առաւելն երկու հարիւր մէթր, Մատլէն-Պասթիյ գացող հանրակառքին մէջ: Հանրակառքը դանդաղօրէն կը թաւալէր և կը կտրէր կ'անցնէր Օրերայի հրապարակը և կերթար Քարուիններու ծառափողոցէն: Հանրակառքին վերի յարկը երկու զլխարկաւոր կտրիճներ կը խօսակցէին: Բարձրաւանդակին վրայ մարդ մը կը քնանար. Հէրլօք Շօլմա ...

Ու գլուխը տատանելով կառքին շարժումէն, Անգլիացին կը մենախօսէր.

— Եթէ իմ քաջ Վիլսոնս զիս հիմա տեսնէր, ինչպէս պիտի հպարտանար ինձմով: Պա՛հ, շատ դիւրին էր նախատեսել սուրիլին ձայնին հետ, որ խաղը պարտաւոր եղած էր և լուրջ բան մը չկար ճաշարանին չորս կողմը հսկելուն մէջ. բայց, ճշմարիտը, սա սատանայ մարդուն հետ, կեանքը շահեկանութենէ զուրկ չէ ...

Վերջին կայարանին, Հէրլօք ծռած էր. Արսէն Լիւբէնը տեսաւ որ իր պահպանողական մարմինին առջեւէն կանցնէր, և իմացաւ որ մըմռաց.

— Դէպի Լըթուալ:

— Դէպի Լըթուալ, աղէ՛կ, ժամադրութիւն տուին ուրեմն, ձգենք որ ինք ինք-նաշարժ կառքով մեկնի, և մենք հետեւինք իր այս երկու ընկերներուն:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՇՐԱԾՆԵՐՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—18



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճէպոյ պէյ խանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
թոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւորին:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասանման	» 12 ֆր.	»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՂԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապր-Ալի հասսէսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտարութով եւ կամ բոսթայի փողով 20 հապը
20 զրուլի հաշուով:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԵՍԹՃԵԱՆ

3 Պահյէ-գաբու թիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կըր-
նաք գտնել այն ամէն չիք, տոկուն և
աժան առարկայները, որոնք թօհա-
ֆիլէի մաս կը կազմեն: Անգամ մը այ-
ցելելը համոզում պիտի կրնայ գոյաց-
նել թէ ուրիշ ո՛ր եւ է տեղ չպիտի կըր-
նաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը
այդ բնտուռած առթիքօրին վրայ: